ՈՒՇԽԵԹԱԿԱՆ ՄԵԼԻԳ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
(ըստ հիերոգլիֆային լուվիերեն աղբյուրների)

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Խեթական պետության կործանումից հետո (մ. թ. ա. XIII դարի վերջ) նրա տարածքի մեծ մասում ստեղծվեցին մի շարք մանր պետություններ և պետական կազմավորումներ, որոնց բնակչության հիմնական մասը կազմում էին խեթա-լուվիական լեզվախմբին պատկանող ժողովուրդները։ Այդ պետությունների շարքում իր ուրույն տեղն ունի Մելիդը, որն իր մեծությամբ և հզորությամբ առանձնանում էր Փոքր Ասիայի մյուս պետություններից։ Ուշխեթական շրջանի Մելիդի[1] դրված տարածքը, որն ընկած էր Փոքր Ասիայի արևելյան մասում[2], մեծ դեր էր խաղում խեթական պետության կյանքում։ Նրա նշանակալից մասը մտնում էր խեթերին ենթակա «Թա(եգարամա երկրի»[3] կազմի մեջ, որն արևելքից սահմանակից էր երկաթի հարուստ պաշարներ ունեցող Իսուվա երկրին՝ Եփրատի ձախափնյա մասում՝ Արածանի-Մուրադսուի միախառնման շրջանում։ Այս տարածքում էր գտնվում նաև խեթական մշակութային և պաշտամունքային կարևորագույն կենտրոններից մեկը՝ Լա(խու)վացանտիյան[4], որ ինքնին արդեն խոսում է Մելիդի տերիտորիայի մի զգալի մասի՝ որպես խեթա-լուվիական էթնոսի բնակեցման կարևորագույն օջախ լինելու մասին։

Մելիդ քաղաքի[5] մասին առաջին վկայությունը ետխեթական շրջանում վերաբերում է Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ին (մ. թ. ա. 1115—1077 թթ.), երբ վերջինս հայտնում է այդ քաղաքից մ. թ. ա. 1112 թ. հարկ գանձելու մասին[6]։ Հետագայում էլ, խոսելով Եփրատի աջափնյա շրջանների մասին, ասորեստանյան և ուրարտական թագավորներն այստեղ հիշատակում են Խաթթի/Խաթե/Խաթինիլի «երկիրը»։

Մելիդի, ինչպես նաև մյուս ուշխեթական պետությունների պատմության և մշակույթի դիտական ուսումնասիրությունը հնարավոր է դարձել մեր դարի

---

[1] *Մելիդի ավելի ուշ շրջանի պատմության մասին տե՛ս* И. М. Дьяконов, Предыстория армянского народа (*այնուհետև՝* ПАН), Ереван, 1968, с. 182—189.

[2] *Մասնագետների միահամուռ կարծիքով Մելիդ քաղաքը գտնվել է այժմյան Մալաթիայի մոտ ընկած Արսլանթեփե բնակավայրի տեղում, որի պեղումների նախնական արդյունքները ներկայացված են Դելապորտի աշխատությունում* (L. Delaporte, Malatya, Paris, 1940)։

[3] *Տե՛ս ասսուր. Թիլ-Դարիմմու, Աստվածաշնչի Թոգարմա, հայկ. Տուն Թորգոմայ. տեղադրության համար տե՛ս* G. F. del Monte und J. Tischler, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte (Repertoire Geographique des Textes Cuneiformes, B. 6), (*այնուհետև՝* OGHT), Wiesbaden, S. 383—384.

[4] *Նույն տեղում,* S. 237—238։

[5] *Հին արևելյան գրավոր աղբյուրներում շատ հաճախ որոշակի շրջաններ և նույնիսկ պետություններ կրում են իրենց գլխավոր քաղաքի անունը, չնայած նույն աղբյուրներին լավ ծանոթ էր տվյալ շրջանի՝ որևէ էթնոսի պատկանելը։ Նփոթությունից խուսափելու նպատակով այստեղ «Մելիդ» անվանումը կկիրառվի նշելու համար պետության ողջ տարածքը։*

[6] *Տե՛ս* A. K. Grayson, Assyrian Royal Inscriptions, II, Wiesbaden, 1976, 1, 32։ *Մի այլ արձանագրությունում Թիգլաթպալասար I-ը Մելիդն անվանում է «Մեծ Խաթթիի երկրի քաղաք»* (RIA III, p. 152—159)։

կեսերից սկսած, երբ հաջողությամբ վերծանվեց փոքրասիական հիերոգլիֆային գիրը[7]։ Առ այսօր 300-ից ավելի արձանագրություններ և մեծ թվով կնիքներ են հայտնաբերվել Փոքր Ասիայում և Հյուսիսային Սիրիայում, որոնք արդեն այժմ կարող են հիմք ծառայել այդ շրջանների պատմության ուսումնասիրման համար։ Հարկ է նշել, որ այդ արձանագրությունները որոշ վերապահումներով միայն կարելի է օգտագործել ուսումնասիրության ընթացքում, քանի որ դեռևս պակաս քանակությամբ նշաններ և բառեր չեն ծառայել իրենց բավարար մեկնաբանություններ։ Սրան պետք է ավելացնել նաև այն, որ արձանագրությունների մեծ մասը շատ փոքրածավալ է և տրաֆարետային բնույթ ունի։ Եթե հաշվի առնենք նաև շատ արձանագրությունների չճշդված ժամանակագրությունը, ապա պարզ կդառնա, թե որքան դժվար է այս կամ այն պետության կապակցված պատմության շարադրումը։

Մելիդից հայտնաբերված երկու տասնյակից ավելի արձանագրությունների[8] ուսումնասիրությունը կապված է որոշակի դժվարությունների հետ։ Դպրի սիստեմի արխաիկությունն է։ Մելիդյան արձանագրությունների բնորոշ դիծը դաղափարագրերի լայն կիրառությունն է և շատ նշանների անստույգ, թերի կատարումը։ Այստեղ վատ է արտահայտված մյուս պետությունների արձանագրություններին հատուկ գաղափարագրերի լայն կիրառումից դեպի վանկային գրի, ինչպես Կարգամիսում, Թաբալում և այլուր[9]։

Մելիդյան արձանագրությունները իրենց ներքին կառուցվածքով չեն տարբերվում մյուս արձանագրություններից՝ ա) ներածություն, բ) հիմնական բովանդակություն և գ) անեծքի բանաձև։ Հատկապես ուշադրության է արժանի արձանագրությունների ներածական մասը, որը պարունակում է կայսրի անունը, նրա տիտղոսները և ծագումնաբանությունը։ Ի տարբերություն մյուս ուշխեթական արձանագրությունների, Մելիդի թագավորները հիմնականում ամփոփակվում են իրենց անունները նշելով և միայն երկու դեպքում են հիշատակում սեփական տիտղոսները (Izgin, Şırzı)։ Մնացած դեպքերում տակա են միայն նրանց անունները, չնայած կանոնավոր հիշատակվում են նախնիների թե՛ անունները և թե՛ տիտղոսները[10]։ Անդրադառնալով Մելիդի

---

[7] Հիերոգլիֆային գրի վերծանման արդյունքները ամփոփված են հետևյալ աշխատություններում՝ E. Laroche, Les hiéroglyphes hittites. Première partie (այնուհետև՝ HH), Paris, 1960. P. Meriggi, Hieroglyphisch-hethitisches Glossar, Zweite, völlig umgearbeitete Auflage (այնուհետև՝ HHG), Wiesbaden, 1962. Նույնի՝ Manuale di eteo geroglifico, P. I—II (այնուհետև՝ MEG), Roma, 1966—1975; վերջին տարիներին այս բնագավառում դրական ներդրումներ են կատարվել՝ J. D. Hawkins-A. Morpurgo-Davies-G. Neumann, Hittite Hieroglyphs and Luwian: New evidence for the connection (Nachrichten der Akad. der Wiss. in Göttingen. Phil.-Hist. Kl., № 6, 1973), Göttingen, 1974 (այնուհետև՝ HHL); J. D. Hawkins, Negatives in Hieroglyphic Luwian, „Anatolian Studies" XXV, 1975 և այլն), որոնց շնորհիվ այժմ կարելի է ապացուցված համարել հիերոգլիֆային գրի լեզվի՝ ուղղագիր լուվիերենի մասն կանգնած լինելը։ Այդ պատճառով ժամանակագրական գրառումները մեզ վերջին տասնամյակում գերիշխում է «հիերոգլիֆային լուվիերենս տերմին՝ նախկինում ընդունված «հիերոգլիֆային խեթերենի» փոխարեն (տե՛ս HHL, p. 4 և այլուր)։

[8] Մելիդյան արձանագրությունները հրատարակել է Մերիջին (MEG II: Testi 2ª e 3ª serie, № 97—99, 101—119), երկու արձանագրություններ՝ Karakuyu I, II (№ 95—96) չափազանց արխաիկ և դժվարամատչելի են, իսկ երրորդում՝ Aslantaş (№ 100) պահպանվել է միայն 3—4 նշան, այդ պատճառով էլ հայտնի չէ, որքանով պատկանելիություն վերոհիշյալ հանգամանքներից երևալով՝ որքան չեն մատչվել ներկա ուսումնասիրության ոլորտը։

[9] Արգեն մ. թ. ա. II—VIII դդ. հիերոգլիֆային գիրը թեկոխում է իր զարգացման վերջին էտապը, որը բնութագրվում է նշանների գաղափարագրային կիրառության խիստ սահմանափակմամբ։ Այդ շրջանում գերակշռում են վանկային նշանները։

[10] Ոչ միայն ուշխեթական արձանագրություններում, այլև հին արևելյան մյուս գրավոր հուշարձաններում նման երևույթ չի նկատվում։

ուսումնասիրման երկու հիմնական աղբյուրների (հիերոգլիֆային և սեպագիր) համադրման հարցին, հարկ է նշել, որ այստեղ գոյություն ունի մի կարևոր հանգամանք, որով և պայմանավորված է այս պետության պատմության վերականգնման դժվարություններից մեկը։ Եթե մյուս պետությունների վերաբերյալ ասորեստանյան աղբյուրներում պահպանված են շատ թե քիչ կանոնավոր տեղեկություններ (Կարգամիս, Կոմմուխ, Խաթինա, Համատ և այլն), ապա Մելիդի մասին հիշատակությունները բավական սուղ են։ Ավելին, Մելիդը ոչ մի անգամ չի հիշատակվում մ. թ. ա. XI—IX դդ. կեսերն ընկած ժամանակահատվածում։ Եվ քանի որ հենց այդ շրջանին են վերաբերում մելիդյան արձանագրությունների մեծ մասը, հիշյալ ժամանակաշրջանի ուսումնասիրությունը խիստ միակողմանի բնույթ է կրում։ Դժբախտաբար, մյուս ուշխեթական պետությունների արձանագրություններում նույնպես ոչ մի տեղեկություն չկա Մելիդի վերաբերյալ։

Մելիդի պատմության գիտական ուսումնասիրության մեջ տեղ գտած բարդությունների վառ օրինակը նրա թագավորների համեմատական աղյուսակն է ըստ երկու խումբ աղբյուրների[11]։

Ասորեստան/Ուրարտու	Մելիդ
Ալլումարու (մ. թ. ա. XII դ. վերջ)	Յարրի-Թարխունտաս (մ. թ. ա. XII դար)[12]
Լալլի (մ. թ. ա. 853—835 թթ.)	Տարաս[13]
Սուլեխավալի(?) (մ. թ. ա. 800 թ.)[14]	Վալա-Ռունտիյաս
Սախու (մ. թ. ա. 780 թ.)	Խալպա-սուլուպիս
Խիլարուադա (մ. թ. ա. 780—750 թթ.)	Սուվաիրմիս[15]
Սուլումալ (մ. թ. ա. 745—732 թթ.)	Մաիրատիս
Գունդինանու(?)	X-zi-Tarhuntas[16]
Թարխունազի (?—712 թ.)	Սուլումիլի I
	Ռունտիյաս

---

[11] Մելիդի թագավորների և նրանց տիտղոսների համար տե՛ս W. Orthmann, Untersuchungen zur späthethitischen Kunst (այնուհետև՝ USK), Bonn, 1971, S. 207—208; J. D. Hawkins, Assyrians and Hittites, p. 76—79; MEG II: Testi-2ª e 3ª serie, p. 62—64. Բոլոր թվականները մոտավոր են և ճշտման կարիք ունեն։

[12] Այս անվան նախկին ընթերցումն է Արի-Թեշուբ (E. Laroche, Les noms des hittites [այնուհետև՝ Noms], Paris, 1966, № 127b, p. 38)։ Այսուհետև բաց կառուցվածք ունեցող բոլոր հատուկ անունները բերվում են գծիկով անջատված՝ դրանց բաղադրիչները ցույց տալու նպատակով։

[13] 82+ra/i-sa անվան ընթերցումը պայմանավորված է նրա գրության առաջին նշանի ակրոֆոնիկ ընթերցումով որպես ta (HH, № 82, p. 49—50; նաև՝ HHG, № 79, S. 195)։ Սա ռոտացիզմի հետևանքով ձևափոխված հին անատոլիական Դաղաս/Տատաս անձնանունն է, (տե՛ս Noms, № 1300 և 240—241)։

[14] Ակնհայտ է, որ Սուլեխավալին սխալ ընթերցման արդյունք է (տե՛ս Н. В. Арутюнян, Заметки по урартской эпиграфике („Древний Восток и мировая культура", 1981, с. 74—76)։

[15] Դժբախտաբար սա հայտնի է միայն իր որդու՝ Մաիրատիսի արձանագրությունից (Malatya III), ընդ որում պարզ չէ նրանց կապը Մելիդի մյուս տիրակալների հետ։

[16] Ինչպես այս, այնպես էլ մյուս դեպքերում, երբ որևէ բառի ամբողջական ընթերցումը կասկած է հարուցում, ստիպված ենք տալ միայն նրա գիտական լատինատառ տառադարձումը՝ որպես հիմք ընդունելով Լարոշի սիստեմը (HH, p. 263—268), հաշվի առնելով նաև նորագույն ուսումնասիրությունները (HHL, p. 50)։

Առնուվանտիս I
Սուլումիլի II
Առնուվանտաս II[17]
Սախուիս
X-ti-Runtiyas

Ինչպես տեսնում ենք, անուններից միայն երկուսն են մասնակիորեն համընկնում (Սախու—Սախուիս, Սուլումալ—Սուլումիլի), այն էլ դեռևս պարզ չէ, իսկապես գործ ունենք նույն անձնավորության հետ, թե դա միայն անունների սովորական զուգադիպություն է։ Ամենայն հավանականությամբ Մելիդի թագավորների մեծ մասը (Տարասից մինչև Առնուվանտաս II) իշխել է սեպագիր աղբյուրներում հիշատակվող Ալլումարուի և Լալլիի միջև ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ մ. թ. ա. XI—IX դդ. կեսերը։

Մելիդի տարածքից հայտնի հնագույն արձանագրությունը՝ Karahöyük-ը[18], բավական դժվարամատչելի է՝ նրանում տեղ գտած մեծ թվով նշանների և բառերի անընթեռնելիության պատճառով։ Ուսումնասիրողների կարծիքով այն պետք է թվագրել Թիգլաթպալասար I-ի շրջանով։ Արձանագրության կազմողը՝ Յարրի-Թարխունտասը, իրեն մեծարում է որպես «346-ti-67 (-67) երկրի մեծ արքա»։ Հարկ է նշել, որ ուշ շրջանի մի արձանագրությունում առկա է «346-(tà) քաղաքի աստված Թարխունտասը» (Malatya IX, a,aa)։ Եթե հիշյալ տեղանունները նույնն են, ապա մի էական դժվարություն է ծագում արձանագրության թվագրման կապակցությամբ։ Հայտնի է, որ Մելիդի հետ առնչվող ասորեստանյան և ուրարտական թագավորները հիշատակում են այդ պետության նույնանուն քաղաքի թագավորներին։ Իրենց հերթին Մելիդի բոլոր թագավորները կրում են «Մելիդ քաղաքի/երկրի թագավոր/երկրի տիրակալ»[19] տիտղոսները։ Եվ եթե «346-ti-67(-67) երկիրը» Մելիդի անվան գրության մի տարբերակը չէ, որ իսկապես կասկածելի է[20], ապա պետք է ենթադրել, որ հիշյալ արձանագրությունը վերաբերում է մի շրջանի, երբ Մելիդը դեռևս մայրաքաղաք չէր։ Այդ դեպքում Յարրի-Թարխունտասը կարող էր իշխել մինչև Թիգլաթպալասար I-ը ընկած շրջանում, այսինքն մ. թ. ա. XII դարում։

Արձանագրությունը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Յարրի-Թարխունտասի գործունեության մասին։ Մասնավորապես, խոսքը գնում է նրա նվաճողական քաղաքականության մասին։ Խոսելով Թարխունտաս աստծու՝ իր նկատմամբ տածած սիրո և բարեհաճ վերաբերմունքի մասին, նա հայտարարում է. «346-ti-67 երկրին նա (Թարխունտասը—Ս. Հ.) երեք քաղաքներ՝ Լա/իկարաման, 26-282-nu-ն (և) 286-mala-ն իրեն իշխելու համար տվեց»[21]։

Յարրի-Թարխունտասի նվաճումների ուղղության որոշման համար կարևոր է առաջին քաղաքի՝ Լա/իկարամայի, տեղադրությունը, քանի որ հաջորդ երկուսի անունները դեռևս ընթերցված չեն։ Հավանաբար, իրավացի է Է. Լարոշը, որի կարծիքով այս քաղաքը համապատասխանում է խեթական աղբյուր-

[17] Սրա և իր անվանակից նախորդի անունների միջև թեթևակի տարբերությունը, հավանաբար, բացատրվում է որոշ հիերոգլիֆային վանկային նշանների ընթերցման յուրահատկությամբ, երբ բաղաձայն+ձայնավոր կառուցվածք ունեցող միևնույն նշանը կարող է մեկից ավելի ձայնավոր պարունակել. օրինակ t+a/i (տե՛ս HH, № 90, p. 53—56)։

[18] MEG II, № 101+MEGT, Tav. XIV.

[19] «Երկրի տիրակալ» տիտղոսը բարդ կառուցվածք ունեցող և դեռևս չընթերցված KUR-ni EN-ia (l) s բառակապակցության պայմանական մեկնաբանությունն է (HHG, S. 172—173)։ Այս տիտղոսը կրում էին Մելիդի, Կարգամիսի և Կումմուխի (?) տիրակալները, որը ամենայն հավանականությամբ փոխարինում էր «թագավոր» գաղափարագրով արտահայտվող բառին՝ LUGAL-tis (տե՛ս HHG, S. 173—174)։

[20] Մելիդ քաղաքի անվան գրության ձևն է՝ 109—125-zi^{URU} (տե՛ս HH, № 109, p. 70)։

[21] Karahöyük, 10.

ներում բազմիցս հիշատակվող Թաlեգարամային (ասսուր. Թիլ-Գարիմմու, անտիկ Γαραγή. այժմ՝ Գյուրյուն)[22]։

Ամփոփելով վերը ասվածը Մելիդի տերիտորիայի մասին Յարրի-Թարխունտասի օրոք, հարկ է նշել, որ, հավանաբար, ավելի ուշ շրջանի Մելիդի ոչ բոլոր մասերն էին մտնում այդ թագավորի պետության կազմը։ Սա Թոխմասուի ավազանում գտնվող խեթական պետության քաղաքների և շրջանների՝ «346-ti-67(-67) երկրի/քաղաքի» շուրջը միավորման ժամանակաշրջանն էր։ Հավանաբար, Թիգլաթպալասար I-ի օրոք այդ միավորումն ավարտվել էր, սակայն արդեն մի ուրիշ՝ Մելիդ քաղաքի գլխավորությամբ։ Նյութի անբավարարության պատճառով դժվար է ասել, թե որոնք էին այդ թագավորության կենտրոնի՝ արևմուտքից արևելք տեղափոխման պատճառները[23]։

Ժամանակագրական առումով հաջորդ արձանագրությունը՝ Izgin-ը[24], բավական հետաքրքիր նյութ է պարունակում Տարաս թագավորի կառավարման մասին։ Դժբախտաբար ոչինչ հայտնի չէ նրա և Յարրի-Թարխունտասի ազգակցական կապի մասին, այդ պատճառով էլ դժվար է ասել, թե երբ է իշխել Տարասը։ Բացառված չէ, որ այս երկուսի միջև ընկած շրջանում Մելիդը կարող էր ունենալ նաև ուրիշ թագավորներ։

Արձանագրության սկզբում խոսվում է ինչ-որ հողերի գրավման մասին. «Եվ հովիտները հովիտներին, սահմանները սահմաններին ես արեցի»[25]։ Գրավված շրջաններում Տարասը քաղաքներ է հիմնում. «Ես կառուցեցի 428-tawa/i քաղաքը և [.....] քաղաքը ես նստեցրի (այսինքն՝ հիմնեցի), քաղաքներում X-liyanis- ի ես նստեցրի, 343-120 քաղաքը իմ հզորության և ուժի համաձայն [.....]»[26]։ Հավանաբար, X-liyanis-ը ինչ-որ պաշտոնի անվանում է[27]։ Կարելի է ենթադրել, որ այդ պաշտոնատար անձի մասին է խոսում Տարասը քիչ անց, որտեղ հիշատակվում է ոմն Առնուվանտիս, որի համար թագավորն ինչ-որ բան է արել։ Նման ենթադրության առիթ է տալիս այն, որ վերոհիշյալ հատվածից հետո շարադրանքում պարզորոշ խոսվում է ոչ թե թագավորի, այլ մի երրորդ անձի գործունեության մասին։ Մասնավորապես, ասվում է, որ «նա ընդարձակեց սահմանները, X-wani(n)zi քաղաքը և Sali-[...]-zi քաղաքը նա սահման դարձրեց»[29]։ Այնուհետև խոսվում է երկու այլ քաղաքների մասին՝ 343-120(-) և [.....]- na, սակայն վնասվածքի պատճառով դժվար է ասել, թե դրանք այստեղ ինչ դեր են խաղացել։

Ինչպես նախորդ արձանագրության մեջ, այստեղ ևս կրկին ծագում է տեղանունների անբավարար ընթերցման արգելքը։ Այնուամենայնիվ, հիշյալ քաղաքներից մեկը՝ 428-tawa/i-ն, կարելի է համեմատել Կարգամիսյան արձանագրություններից մեկում հիշատակվող 428-tà-à-x քաղաքի հետ[29]։ Չնայած

---

22 HH, № 225, էջ 123։

23 Ուսումնասիրվող արձանագրությունը հայտնաբերվել է Մալաթիայից արևմուտք գտնվող էլբիստան քաղաքի շրջակայքում (Կարահյուք գյուղի մոտ), որը և թույլ է տալիս ենթադրելու, որ այդ շրջանում էր գտնվում Յարրի-Թարխունտասի պետության կենտրոնը։

24 MEG II, № 102+MEGT, Tav. VIII.

25 Izgin, 4.

26 Նույն տեղում, 6—9. այնքան էլ պարզ չէ այս հատվածում հիշատակվող երկրորդ քաղաքի նկատմամբ կատարված գործողությունը։ Հիերոգլիֆային արձանագրություններում սովորաբար isanuwa բայը ունի «տեղադրել, նստեցնել» նշանակությունը (HHG, S. 37—38) և շինարարական արձանագրություններում այն բնորոշում է այս կամ այն աստծու արձանի կամ պատկերի տեղադրումը (տե՛ս № 39 ծանոթագրությունը)։ Սա թույլ է տալիս ենթադրելու մեր արձանագրության մեջ ոչ թե քաղաքի, այլ մի ուրիշ կառույցի (տաճար, աստծու արձան) շինության մասին։

27 HHG, № 248, S. 218; նույնի՝ MEG II: Testi-2² e 3ª serie, p. 40.

28 Izgin, 22—24.

29 HH, № 428, p. 222.

վերջինս առայժմ նույնպես տեղադրված չէ, սակայն ամենայն հավանականությամբ այդ քաղաքը կարող էր գտնվել երկու պետությունների միջև ընկած շրջանում, եթե միայն սա անունների պատահական զուգադիպություն չէ։ Այդ դեպքում մյուս քաղաքներն էլ կարող էին գտնվել նույն տարածքում, որի մասին անուղղակի վկայում է Առնուվանտիսի գործունեության մասին հատվածը. հավանաբար, վերջինս կառավարիչ էր նշանակվել նոր նվաճված տերիտորիաներում։

Ինչպես երևում է, Տարասի կառավարման շրջանում Մելիդը զգալի հաջողություններ է ունեցել արտաքին քաղաքականության բնագավառում։ Ի դեպ, Տարասն առաջինն է Մելիդի թագավորներից, որ կրում է «Մելիդ քաղաքի երկրի տիրակալ» տիտղոսը։ Սա խոսում է այն մասին, որ Տարասի օրոք երկրի մայրաքաղաք էր դարձել Մելիդ քաղաքը։

Մելիդյան երկու արձանագրություններ՝ Kötükale-ն[30] և Gürün-ը[31], ամենայն հավանականությամբ, կազմված են Izgin-ից 70—80 տարի անց և վերաբերում են Մելիդի թագավոր Ռունտիյասին։ Հետաքրքիր է, որ Ռունտիյասը կրում է «Կարգամիսի հերոս» բավական արտասովոր տիտղոս[32]։ Առաջին արձանագրությունը շատ հակիրճ բովանդակություն ունի. այստեղ խոսվում է միայն ինչ-որ «մեծ ճանապարհի» կառուցման մասին։

Առավել հետաքրքիր է երկրորդը՝ Gürün-ը, որտեղ երկու անգամ հիշատակվում է նախորդ արձանագրություններից հայտնի 428-tà քաղաքը[33]։ Երկրորդ դեպքում այդ քաղաքից հետո խոսվում է երկու լեռների՝ Խառխառի և Մուցիի մասին, որոնց նկատմամբ Ռունտիյասը ինչ-որ գործողություն է կատարել[34]։ Չնայած արձանագրության վնասվածքին, պետք է ենթադրել, որ թագավորն այս լեռների շրջանում քաղաք է կառուցել, որի համար իրեն «այդ աստվածները բարձրացրել են»։ Հիշյալ քաղաքի տեղադրման կապակցությամբ լուրջ ուշադրության են արժանի Կայսերիի (անտիկ Կեսարիա) շրջանից հայտնաբերված երեք հիերոգլիֆային արձանագրություններ (Hisarcik I, II; Tekirderbent I), որտեղ հիշատակվում է Խառխառ լեռը[35]։ Խառխառի համադրումը Կայսերիից հարավ գտնվող Էրջիյաս (անտիկ Արգեոս) հրաբխային լեռան հետ[36], հավանաբար, խոսում է այն մասին, որ 428-tà քաղաքը պետք է գտնվեր այդ լեռան շրջակայքում։

Չնայած համեմատաբար սուղ տեղեկություններին, այնուամենայնիվ պետք է ենթադրել, որ Ռունտիյասի օրոք Մելիդն իրենից մի բավական ընդարձակ պետություն էր ներկայացնում։ Եթե Էրջիյաս լեռան շրջանը պատկանում էր Մելիդին, ապա նշանակում է, որ այդ պետությունը ձգվում էր արևելքից արևմուտք մոտավորապես 250 կմ տարածության վրա։ Տարածքով փոքր, երբեմն նաև աննշան ուշխեթական պետությունների համեմատությամբ Մելիդը կարող էր հզոր պետություն համարվել։

Հաջորդ արձանագրությունը՝ Darende-ն[37], պատկանում է Առնուվանտաս II-ին, որն իշխել է Ռունտիյասից մոտավորապես երկու սերունդ հետո։

---

[30] MEG II, № 104+MEGT, Tav. IX.

[31] Նույն տեղում, № 97+MEGT, Tav. VI.

[32] Նման տիտղոս կարող էր կրել Կարգամիսի թագավորական դինաստիայի հետ որևէ առնչություն ունեցող անձնավորություն։ Դժբախտաբար Մելիդի և Կարգամիսի հարաբերությունների մասին ոչ մի տեղեկություն չկա։

[33] Gürün, 2, 6.

[34] Iis(a)- բայի իմաստը գեռևս պարզաբանված չէ (տե՛ս MEG II: Testi-2ª e 3ª serie, p. 32—33).

[35] Hisarcik I, 1 (MEG II, № 68+MEGT, Tav. II); Hisarcik II, 2 (MEG II. № 69+MEGT, Tav. III); Tekirderbent I, 3, 4 (MEG II, № 70+MEGT, Tav. IV).

[36] HHG, S. 51.

[37] MEG II, № 98+MEGT, Tav. VII.

Չնայած փոքր ծավալին, այն մեծ նշանակություն ունի Մելիդի պատմության ուսումնասիրման համար։

Առնուվանտաս II-ը հաղորդում է. «Եվ ես նրան 485-li[38] քաղաք 57-mani-ում նստեցրի (այսինքն՝ տեղադրեցի) և այս արձանագրությունը/հուշասյունը (?) աստծու համար դրեցի»[39]։ № 57 հիերոգլիֆի ակրոֆոնիկ ընթերցումը որպես ka, որի շնորհիվ քաղաքը ստանում է Կամանի տեսքը[40], կարծես ամրապնդվում է թե՛ մելիդյան և թե՛ ասորեստանյան ու ուրարտական աղբյուրների հաղորդած տեղեկություններով։

Արգիշտի I-ի Խորխորոյան տարեգրության չորրորդ տարվա դեպքերի կապակցությամբ հիշատակվում է Կամանանի երկիրը[41], ընդ որում արշավանքի տվյալները խոսում են նրա՝ Մելիդ քաղաքից (տե՛ս Մելիտեա Խորխորոյան արձանագրությունում) արևմուտք ընկած լինելու օգտին[42]։ Ավելի ուշ Սարգոն II-ը, խոսելով Մելիդի տարածքի մասին, այն անվանում է Կամմանու[43]։

Այսպիսով, եթե մեր արձանագրության մեջ ճիշտ է Կամանի ընթերցումը, ապա պետք է ենթադրել, որ Կամանանի/Կամմանու երկիրը ոչ այլ ինչ է, քան Մելիդի կազմի մեջ մտնող մի շրջան։

Առավել դժվար է այս Կամանիի նույնացումը, քանի որ դրանից է կախված Մելիդի տարածքի հարցը։ Մասնագիտական գրականության մեջ առայժմ չկա վերջնական կարծիք հիեր. Կամանի-ասսուր. Կամմանու-ուրարտ. Կամանանի փոխհարաբերության մասին[44], այդ պատճառով էլ հարցի լուծումը բաց է մնում։

---

38 Այս բառը 57-mani բաղադրի մակդիրն է, որի իմաստը առայժմ անհայտ է (HH, № 485, с. 243)։

39 Darende, 2—3։ Բերված հատվածի առաջին մասի թարգմանությունը որոշակի դժվարությունների հետ է կապված. awa-tu 57-manin URU 485-lin isanuwaha նախադասությունը՝ ելնելով հիերոգլիֆային լուվիերենի բերականության կանոններից, անհրաժեշտ է մեկնաբանել ինչպես բերված է վերը։ Հարկ է նշել, որ հիերոգլիֆային լուվիերենում ներգոյական հոլովի բացակայության պայմաններում այդ հոլովի իմաստը հաճախ արտահայտվում է հայցականով։ Այդ նշանակում է, որ բերված հատվածը բառացիորեն այսպես է թարգմանվելու. «Եվ ես նրան 485-li 57-mani քաղաքը (այսինքն՝ քաղաքում) նստեցրի»։

40 HHG, S. 72, նշանի համար տե՛ս HH, № 57, p. 36—37.

41 Н. В. Арутюнян, Хорхорская летопись Аргишти I («Эпиграфика Востока», VII (այնուհետև՝ Хорхорская летопись), 1953, М.—Л., с. 92); 18; նաև՝ Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи (այնուհետև՝ УКН), М., 1960, № 127, ст. II, с. 18.

42 Н. В. Арутюнян, Биайнили (այնուհետև՝ Биайнили), Ереван, 1970, с. 203—207.

43 D. D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, I—II (այնուհետև՝ ARAB), Chicago, 1926—1927, II, §§ 26, 60, 79, 92, 99.

44 Լանդսբերգերը Կամմանուն տեղադրում է Գյուրյունի մոտ գտնվող Ոզուն յայլա բնակավայրի շրջակայքում (B. Landsberger, Sam'al, Ankara, 1948, S. 20, Anm. 40); Մերիջին նույնացնում է Կամանին Կամմանուի հետ, սակայն խուսափում է գրանց տեղադրումից (HHG, S. 72); Թվում է, հիշտ է Դյակոնովը, երբ առաջարկում է Կամանանի-Կամմանու-անտիկ Κόμανα (Կատառնյան) համադրությունը (ПАН, с. 134)։ Կատառնյան Կոմանան մ. թ. ա. II հազ. լուվիական խոշորագույն կրոնական կենտրոն Կումմաննին է (GGhT, S. 211—216, 221), որը, ամենայն հավանականությամբ, կարող էր առանձնանալ այդ ոեգիոնի մյուս քաղաքներից (տե՛ս 485-li մակդիրը)։ Հազիվ թե մ. թ. ա. VIII դ. սեպագիր աղբյուրները Մելիդը կոչեին մի քաղաքի անունով, որն իր նշանակությամբ և դերով գիջեր Մելիդ քաղաքին և որը շատ հնարավոր է Կումմաննի-Կոմանա-Կամանիի դեպքում։ Որ Մելիդ քաղաքից այդքան հեռու ընկած շրջանը կարող էր պատկանել Մելիդին, այնքան էլ անհավանական չէ, եթե հիշենք, որ Karahöyük-ը և Izgin-ը գտնվել են անտիկ Կոմանայից ընդա-

Darende-ն Մելիդյան վերջին արձանագրությունն է, որը պատմական որոշակի նյութ է պարունակում։ Մելիդի տարածքից հայտնի մյուս արձանագրությունները շինարարական և մաղթանքի տեքստեր են[45], որոնք, իհարկե, չեն կարող նպաստել նրա ռազմաքաղաքական պատմության ուսումնասիրությանը։

Մելիդի թագավորների անունների և նրանց ծագումնաբանության առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Մալաթիայի շրջակայքից հայտնաբերված չափազանց հակիրճ 14 արձանագրություններ[46]։

Դժբախտաբար, ժամանակագրական առումով Մելիդյան արձանագրություններն ընդհատվում են մոտավորապես մ. թ. ա. VIII դ. կեսերին, չնայած դրանից հետո էլ Մելիդը պահպանում է իր գոյությունը համարյա կես դար։

Վերն արդեն նշվեց, որ Թիգլաթպալասար I-ից հետո ասորեստանյան աղբյուրներում ավելի քան երկու և կես դար Մելիդն ընդհանրապես չի հիշատակվում։ Եվ միայն մ. թ. ա. IX դ. կեսերից է նա հանդես գալիս Ասորեստանի թագավորների արձանագրություններում։ Այսպես, Սալմանասար III-ի օրոք (մ. թ. ա. 850—824 թթ.) Մելիդը բազմիցս հիշատակվում է Ասորեստանին հարկատուների թվում[47] և, չնայած Մելիդը նվաճելու մասին այս թագավորի հայտարարությանը[48], թվում է, որ նա սահմանափակվել է միայն հարկի գանձմամբ։ Ընդ որում պետք է ենթադրել, որ Մելիդը կամովին է ընդունել Ասորեստանի գերիշխանությունը, քանի որ այնտեղ չի խոսվում որևէ ընդհարման մասին։ Սալմանասար III-ը բոլոր դեպքերում հիշատակում է Մելիդի թագավոր Լալլիին։

Մ. թ. ա. XI դ. վերջին Մելիդը կրկին հիշատակվում է, սակայն այս անգամ արդեն ուրարտական թագավոր Մենուայի կողմից՝ նրա արևմտյան արշավանքի կապակցությամբ[49]։ Մենուան խոսում է Մելիդի թագավոր Խիլարուադայից հարկ գանձելու մասին, որից կարելի է ենթադրել, որ Մենուան չի գրավել ողջ Մելիդը[50]։

Արգիշտի I-ի Խոռխոռյան տարեգրության չորրորդ տարվա (մ. թ. ա. 783 թ.)՝ դեպի արևմուտք կազմակերպած արշավանքի ընթացքում[51] Մելիդն ընկնում է Ուրարտուի գերիշխանության տակ ընդհուպ մինչև Ուրարտուի պարտությունը՝ մ. թ. ա. VIII դ. 40-ական թվականներին Ասորեստանի դեմ մղված պայքարում։ Ուրարտա-ասորեստանյան ընդհարման ժամանակ, որին նախորդել էր Սարդուրի II-ի կողմից Մելիդի դեմ մղված պատերազմը մ. թ. ա. 760 թ.[52], Մելիդը հանդես է գալիս որպես Ուրարտուի դաշնակից[53]։ Թիգլաթպալասար III-ի (մ. թ. ա. 745—727 թթ.) հաղթանակով (մ. թ. ա. 743 թ.) Մելիդը վերջնականապես ընկնում է Ասորեստանի գերիշխանության տակ[54]։ Երեք տասնամյակ անց՝ մ. թ. ա. 712 թ. Մելիդը գրավում է Սարգոն II-ը, և նրա թագավոր Գունդինանուն գահընկեց է արվում, իսկ Մելիդում նշանակվում է

մենը 60—65 կմ դեպի արևելք, ընդ որում Յարրի-Թարխունտասի օրոք, հավանաբար, Մելիդի կենտրոնը ընկած է եղել արձանագրությունների հայտնաբերման վայրում (տե՛ս № 23 ծանոթագրությունը)։

45 Şirzi (MEG II, № 119+MEGT, Tav. XII); Ispekçur (MEG II, № 103+MEGT, Tav. VII); Palanga (MEG II, № 99+MEGT, Tav. V).

46 Malatya I—XIV (MEG II, № 105—118+MEGT, Tav, IX—X).

47 ARAB I, §§ 610, 636, 638.

48 Նույն տեղում՝ §§ 641, 674, 685, 690։

49 УКН 39.

50 Биайнили, с. 163—172.

51 Хорхорская летопись, с. 90—93; Биайнили, с. 203—207.

52 Биайнили, с. 239—241.

53 ARAB I, §§ 769, 797.

54 Նույն տեղում, §§ 769, 772, 800։

ասորեստանյան կառավարիչ[55]։ Շուտով թագավոր հռչակված Թարխունազին՝ Գունզիանուի որդին, ապստամբում է Ասորեստանի դեմ, և միայն մեծ դրժվարությամբ Սարգոն II-ին հաջողվում է ճնշել այն։ Թարխունազին իր մերձավորների հետ ուղարկվում է Ասորեստան, իսկ Մելիդը մտցվում է Ասորեստանի կազմի մեջ[56]։

Հիերոգլիֆային լուվիերեն արձանագրությունների ուսումնասիրության ներկա մակարդակը դեռևս հեռու է բավարար լինելուց։ Նոր արձանագրությունների հայտնաբերումը, ինչպես նաև հիերոգլիֆային գրի ու լեզվի հետագա ուսումնասիրությունը անշուշտ մեծապես կնպաստեն մ. թ. ա. XII—VIII դդ. Փոքր Ասիայի կարևորագույն պետական կազմավորումներից մեկի պատմության առավել խոր հետազոտմանը։

ПОЗДНЕХЕТТСКОЕ ГОСУДАРСТВО МЕЛИД
(по иероглифическим лувийским источникам)

АРАМ КОСЯН

Резюме

Обстоятельный анализ текстуального материала иероглифических лувийских надписей, обнаруженных на территории позднехеттского государства Мелид, в известной мере способствует многостороннему изучению истории и культуры этого важного политического объединения в восточной части Малой Азии в период XII—VIII вв. до н. э. Сведения, содержащиеся в этих надписях, восполняют значительный пробел в истории Мелида, который охватывает период от эпохи Тиглатпаласара I (1115—1077 гг. до н. э.) до середины IX в. до н. э., не освещенный ассирийскими и урартскими источниками.

Надписи позволяют определить, что в указанную эпоху Мелид вел экспансивную политику на западе, где ее границы доходили до района совр. Кайсери, и что упомянутая в клинописных источниках «страна» Каманани/Камману не что иное, как западная часть Мелида с центром Камани (хетте. Кумманни—антич. Комана) у истоков реки Гёксу.

---

[55] ARAB II, §§ 79, 92, 99.

[56] *Նույն տեղում, §§ 26, 60։*